ԱԺԲԳ

# ՏԵՂԵԿԱՆՔ

## 2020-2022թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար-մարտ)

Տնտեսական ակտիվության ցուցանիշ (ՏԱՑ)՝ %










Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)




Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2022թ. հունվար-մարտին 2021թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ (աճողական) կազմել է՝ 109.6%, 2021թ. հունվար-մարտին 2020թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ 96.5%, իսկ 2020թ. հունվար-մարտին 2019թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 104.8%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հուվար-մարտին կազմել է 550 մլրդ 722.1 մլն դրամ, ինչը 2021թ. և 2020թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 80.3 և 100.3 մլրդ դրամով:

Իրականացված շինարարության ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հուվար-մարտին կազմել է 55 մլրդ 957.1 մլն դրամ, ինչը 2021 և 2020 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 7.2 և 12 մլրդ դրամով:

Առևտրի շրջանառությունը (ընթացիկ գներով) 2022թ. հուվար-մարտին կազմել է 781 մլրդ 149.1 մլն.դրամ, ինչը 2021 և 2020 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 116.4 և 123.6 մլրդ դրամով. իսկ այլ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հունվար-մարտին կազմել է 503 մլրդ 210.7 մլն դրամ, ինչը 2021 և 2020 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 99.2 և 50.9 մլրդ դրամով:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի իրական աճը 2022թ. հունվար-մարտին 2021թ. հունվար-մարտի նկատմամբ կազմել է 103.1%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 96.1%-ի և 108.7%-ի պարագայում:

Իրականացված շինարարության ծավալի իրական աճը 2022թ. հունվար-մարտին 2021թ. հունվար-մարտի նկատմամբ կազմել է 106.2%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 104.7%-ի և 90.6%-ի պարագայում:

ԱԺԲԳ

## Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)







## Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)







Առևտրի շրջանառության իրական աճը 2022թ. հունվար-մարտին 2021թ. հունվար-մարտի նկատմամբ կազմել է 107.6%, 2021 և 2020 թթ., ինչպես նաև 2020 և 2019 թթ. համեմատվող նույն ժամանակաշրջանների 94.4%-ի և 100.2%-ի պարագայում. իսկ ծառայությունների ծավալի իրական աճը 2022թ. հունվար-մարտին 2021թ. հունվար-մարտի նկատմամբ կազմել է 122.2%, 2021 և 2020 թթ., ինչպես նաև 2020 և 2019 թթ. համեմատվող նույն ժամանակաշրջանների 91.9%-ի և 105.7%-ի պարագայում:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հունվար-մարտին կազմել է 144 մլրդ 729.5 մլն դրամ, ինչը 2021թ. և 2020թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 15.3 և 57.6 մլրդ դրամով:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հունվար-մարտին կազմել է 303 մլրդ 819.1 մլն դրամ, ինչը 2021թ. և 2020թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 45.7 և 18.8 մլրդ դրամով:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հունվար-մարտին կազմել է 96 մլրդ 348.4 մլն դրամ, ինչը 2021թ. և 2020թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 18.5 և 23 մլրդ դրամով:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հունվար-մարտին կազմել է 5 մլրդ 825.1 մլն դրամ, ինչը 2021թ. և 2020թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 807.4 և 854.9 մլն դրամով:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2022թ. հունվար-մարտին 2021թ. հունվար-մարտի նկատմամբ կազմել է 87.1%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 108.1%-ի և 126.9%-ի պարագայում:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2022թ. հունվար-մարտին 2021թ. հունվար-մարտի նկատմամբ կազմել է 110.9%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 88.4%-ի և 103.8%-ի պարագայում:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2022թ. հունվարի-մարտին 2021թ. հունվար-մարտի նկատմամբ կազմել է 103.3%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 111.2%-ի և 111.7%-ի պարագայում:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2022թ. հունվար-մարտին 2021թ. հունվար-մարտի նկատմամբ կազմել է 106.7%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 100.9%-ի և 82.2%-ի պարագայում:

ԱԺԲԳ

## Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)




## Սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)




## Զուտ միջազգային պահուստներ (ԶՄՊ), ժամանակաշրջանի վերջի դրությամբ, մլն. դրամ







Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հուվար-մարտին կազմել է 62 մլրդ 484.1 մլն դրամ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 508.4 մլն դրամով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 50.7 մլրդ:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հուվար-մարտին կազմել է 92 մլրդ 524.9 մլն դրամ, ինչը 2021 և 2020 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 18.2 և 26 մլրդ դրամով:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հուվար-մարտին կազմել է 135 մլրդ 316,5 մլն դրամ, ինչը 2021 և 2020 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 19.9 և 21.6 մլրդ դրամով:

Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալի իրական աճը 2022թ. հունվար-մարտին ին 2021թ. հունվար-մարտի նկատմամբ կազմել է 102.9%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 63.9%-ի և 108.5%-ի պարագայում:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալի իրական աճը 2022թ. հունվար-մարտին 2021թ. հունվար-մարտի նկատմամբ կազմել է 124.5%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 112.8%-ի և 106.4%-ի պարագայում:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալի իրական աճը 2022թ. հունվար-մարտին 2021թ. հունվար-մարտի նկատմամբ կազմել է 114.1%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև  2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 101.5%-ի և 112.9%-ի պարագայում:

ՍԳԻ-ն 2022թ. հունվար-մարտին 2021թ. հունվար-մարտի նկատմամբ կազմել է 107.0%, 2021թ. հունվար-մարտին 2020թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ` 105.2%, 2020թ. հունվար-մարտին 2019թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ` 99.9%: ՍԳԻ-ն 2022թ. մարտին 2021թ. դեկտեմբերի նկատմամբ կազմել է 103.5%, 2021թ. մարտին 2020թ. դեկտեմբերի նկատմամբ` 103.8%, 2020թ. մարտին 2019թ. դեկտեմբերի նկատմամբ` 101.7%:

Զուտ միջազգային պահուստները (ԶՄՊ) 2022թ. մարտի վերջի դրությամբ կազմել է 1 տրիլիոն 38 մլրդ 369 մլն դրամ, ինչը 226.6 մլրդ դրամով կամ 17.9%-ով պակաս է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 50.1 մլրդ դրամով կամ 5.1%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Աշխատանք փնտրողների թիվը 2022թ. մարտի դրությամբ կազմել է 82485 մարդ, ինչը 8083 մարդով կամ 8.9%-ով պակաս է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 3405 մարդով կամ 4%-ով պակաս է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից: Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը 2022թ. մարտի դրությամբ կազմել է 56504 մարդ, ինչը 6495 մարդով կամ 10.3%-ով պակաս է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 5211 մարդով կամ 8.4%-ով պակաս է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

ԱԺԲԳ

ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը և առևտրի հաշվեկշիռը (մլն ԱՄՆ դոլար)




ՀՀ արտահանումը և ներմուծումը (մլն ԱՄՆ դոլար)




Միջին ամսական անվանական աշխատավարձը աճողական, դրամ




Պետական բյուջեի պակասուրդի/հավելուրդի ֆինանսավորման աղբյուրները, ընթացիկ գներով, մլն դրամ




Արտաքին և փոխադարձ առևտրի առևտրաշրջանառության ծավալը 2022թ. հունվար-մարտին կազմել է 2 մլրդ 98 մլն դոլար, ինչը 583.4 մլն դոլարով կամ 38.5%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 518.8 մլն դոլարով կամ 32.9%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը 2022թ. հունվար-մարտին կազմել է -634.5 մլն դոլար, ինչը 273 մլն դոլարով կամ 75.5%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 163.3 մլն դոլարով կամ 34.7%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտահանման ծավալը (ՖՕԲ գներով) 2022թ. հունվար-մարտին կազմել է 731.8 մլն դոլար, ինչը 155.2 մլն դոլարով կամ 26.9%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 177.8 մլն դոլարով կամ 32.1%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Ներմուծման ծավալը (ՍԻՖ գներով) 2022թ. հունվար-մարտին կազմել է 1 մլրդ 366.2 մլն դոլար, ինչը 428.1 մլն դոլարով կամ 45.6% -ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 341 մլն դոլարով կամ 33.3%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Միջին ամսական անվանական աշխատավարձը (աճողական) 2022թ. հունվար-մարտին կազմել է 212767 դրամ, ինչը 18682 դրամով կամ 9.6%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 22631 դրամով կամ 11.9%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

2022թ. հունվար-մարտին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 28 մլրդ 674.6 մլն դրամ, ընդ որում, ներքին աղյուրների հաշվին ֆինանսավորումը՝ -6,443.5 մլն դրամ, արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ -22,231.1 մլն դրամ: 2021թ. հունվար-մարտին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է 55 մլրդ 607.8 մլն դրամ: Ընդ որում ներքին և արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար -272 մլրդ 235.6 մլն և 327 մլրդ 843.4 մլն դրամ: 2020թ. հունվար-մարտին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 38 մլրդ 7.3 մլն դրամ, ընդ որում, ներքին և արտաքին աղբյուրներից ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար -1,537.4 և -36,469.9 մլն դրամ:

Տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի ինտերնետային կայքի հրապարակումները ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ